# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# «ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 11 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
# ՊՈԱԿ-Ի
# 2023-2028 ԹԹ
# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ





# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն……………………………………………………………5
2. Ուսումնական հաստատության առաքելությունը........................................6
3. Իրավիճակի վերլուծություն……………………………………………..22
4. Նպատակների ու խնդիրների սահմանումը...............................................33
5. Ուսումնական հաստատության գործունեությունը ըստ ոլորտների……39
6. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը, պատասխանատուները,գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներն ու նյութատեխնիկական պարագաները…………………………46
7. Զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը……………………...….54
8. Վերահսկողության մեխանիզմները…………………………………………55
9. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատում…………………………………………………58

## ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱՐԳԻ ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԸՆԴԳՐԿՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ,ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

4-5. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

6. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ

7. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

8. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

9. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Սույն զարգացման ծրագիրը մշակվել է

ՀՀ ԿԳՄՍՆ 22 սեպտեմբերի 2022թ. 35-Ն

Հրամանի հավելվածի պահանջների համաձայն

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրական ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Յուրաքանչյուր ազգի բնորոշ է գործունեության առավել ընդգծված հատկանիշ, կերպար,ձև,որի շուրջ համախմբվում են ազգովի: Հնագույն ժամանակներից մեզ համար մշակույթն ու գիտությունը ծառայել են նպատակ և միջոց ազգային հարատ և մանիամար: Պատմական փաստերը վկայում են, որ երկիր մոլորակի տարբեր կողմերում հայերն ու Հայաստանը ճանաչվել նգնահատել են մշակութային,գիտական ներուժով:

«ՀՀ հանրակրթության մասին» օրենքով հանրակրթական դպրոցի գործունեության նպատակը անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը,ինչպես նաև ինքնակրթության և լրացուցիչ կրթության պահանջմունքների բավարարման պայմանների ապահովվում է: Դրա համար շատ կարևոր է, որ սովորողը գիտակցի, որ գիտությունը, արդի տեխնոլոգիաները կրթության մեծագույն արժեքներ են ժ ամանակակից աշխարհում: Ժամանակակից աշխարհում գիտական նվաճումներին տիրապետելը ոչ միայն կարևոր է, այլև անհրաժեշտ:Որևէ խնդիր լուծում չունի առանց կրթության:

Ամեն ինչ սկսվում  է կրթությունից և  վերջանում կրթությամբ:

Ժամանակակից աշխարհում գրեթե բոլորոլ որտներում փոփոխություններն աննախադեպ, արագ ու դինամիկ են ընթանում: Նման փոփոխությունների առանձնահատկություններից մեկն այն է, որ գիտության ու տեխնիկայի ընձեռած նոր

հնարավորությունները արագորեն ներթափանցում են հասարակական հարաբերությունների, կյանքի, աշխատանքի, գիտելիքների ձևավորման ու փոխանցման ոլորտ: Շարունակաբար նորացվող, զարգացող ու փոփոխվող գիտելիքները և դրա ստեղծման համար անհրաժեշտ նորարարությունն ու ստեղծագործականությունը դառնում են մրցունակության և արդյունավետության բարձրացման կարևորագույն գործոններ՝ թե՛ անհատական, թե՛ ներպետական և թե՛ համաշխարհային մակարդակներում: Գիտելիքն այսօր այլևս լոկալ բնույթ չի կրում.Հեռահաղորդակցման դարաշրջանում աշխարհի որևէ ծայրում ստեղծված գիտելիքն արագորեն տեղայնացվում է աշխարհի մեկ այլ անկյունում: Ըստ այդմ կրթության որակի նկատմամբ պահանջներն ավելի արդիական են դառնում:

Հանրակրթության դերն աճում է. միաժամանակ կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության և արժեքային որակներ:

Հանրակրթության համակարգում տեղի են ունենում համակարգային փոփոխություններ, որոնք պայմանավորված են ոչ միայն ազգային առանձնահատկություններով, այլև համաշխարհային զարգացումներին բնորոշ աշխարհաքաղաքական, ժողովրդագրական, մշակութային, սոցիալական գործոններով:

Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղ է, որը սահմանում է 2023-2028 թվականների դպրոցի զարգացման հիմնական ուղղություններն՝արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան,հաշվի է առնված կրթական հաստատության ինքնազարգացման ներուժը և Կապան քաղաքի համայնքային կարիքները:

## 1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

*Առաքելությունը կազմակերպության*

*ցանկալի ապագայի մտապատկերն է*

Առաքելությունը դպրոցի այն հեռապատկերն է, որին ձգտում է հասնել տվյալ հաստատությունը որոշակի ժամանակահատվածում: Նրա ձևակերպման համար անհրաժեշտ է հաշվի առնել դպրոցի մանկավարժների, սովորողների և ծնողների կարծիքները:

- Սովորողների համար մատչելի,բարձրորակ,արդյունավետ և արդիական կրթության,նրանց մտավոր,հոգևոր,ֆիզիկական և սոցիալական զարգացման,նրանց անձի՝որպես քաղաքացու ձևավորման,ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշման համար անհրաժեշտ կարողունակությունների ձեռք բերման,բարենպաստ կրթական միջավայրի ապահովումն է և մասնագիտական կրթության նախապատրաստելը:

- Աշակերտակենտրոն և նորարական ուսուցման ստեղծում և ապահովում,որտեղ սովորողները ստանալու են միջնակարգ կրթություն,բարոյական հոգևոր արժեքների յուրացման այնպիսի մակարդակ,որն անհրաժեշտ է միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումն շարունակելու համար

- Դաստիարակել իրենց իրավունքներն իմացող մարդասեր, հայրենասեր ՀՀ ապագա քաղաքացիներ՝ուսումնառության,ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման նկատմամբ աճող շահագրգռվածությամբ

- Մանկավարժները ձգտելու են զարգանալ իրենց գործունեությամբ և ստեղծագործական մտածելակերպով, արդյունքում կատարելագործելով ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական համակարգի աշխատանքները, վերազինելով բովանդակային կառուցվածքը արագ փոփոխվող կրթական բարեփոխումներում:

Դպրոցիզարգացմանսույնծրագրինպատակըհաջողակներիդպրոցիձևավորումնէ,ինչը ենթադրում է.

● Յուրաքանչյուր սովորողի կարիքների համահունչ անհրաժեշտ ուշադրության ապահովում

●Այնպիսի պայմանների ստեղծում,որտեղ յուրաքանչյուր սովորող որոշակի ոլորտում կարող է ինքնահաստատվել և դառնալ հաջողակ

●Օտար լեզուների խորացված ուսուցման, արտասահմանյան իր հասակակիցների հետ անմիջական շփումների միջոցով համաշխարհային մշակույթին ծանոթ,հայրենասեր քաղաքացու ձևավորում

●Դպրոց բոլորի համար . դպրոց, որտեղ կարող են հաջողությամբ սովորել և' սովորական և' օժտված երեխաները

●Համայնքի հետ ակտիվ համագործակցող , համայնքի սոցիալ- մշակութային կենտրոն հանդիսացող դպրոց

●Դպրոց ոչ թե նախապատրաստում է երեխային կյանքին, այլ նա արդեն իսկ ապրում է այսօր

●Յուրաքանչյուր երեխա ունակ է սովորելու,սակայն յուրաքանչյուրն ունի զարգացման իր հետագիծը

●Օժտված երեխաների տարբերակված,խորացված ուսուցման կազմակերպման համար բարենպաստ պայմանների ստեղծում

Դպրոցի տեսլականն է սովորողի մոտ ձևավորել այնպիսի կարողունակություններ,որոնք սովորողները կկիրառեն ողջ կյանքի ընթացքում:

## 2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ

Կապանի թիվ 11 միջնակարգդպրոցը գտնվում է ՀՀ սյունիքի մարզի Կավարտ թաղամաս 124 հասցեում,կենտրոնից 6 կմ հեռավորության վրա: Դպրոցում սովորորում են 70 աշակերտ և համանման հաստատություններից տարբերվում է նրանով, որ այստեղ սովորում են Կապանից, Արփիկից, Աշոտավան ,Լենհանքեր, Կավարտ թաղամասի երեխաները:Այս թաղամասի համար դպրոցը հանդիսանում է կրթամշակույթային կենտրոն:

Դպրոցի առաքելությունը ձևակերպվել է՝ հաշվի առնելով համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից,ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը և յուրաքանչյուր երեխայի անհատականությունը

1. Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1960 թվականին,եղել է ութամյա դպրոց , 1991-1992ուստարում՝ հիմնական,իսկ , 1993-1994ուստարում՝միջնակարգ դպրոց:
2. Դպրոցի հիմնադիրըՀայաստանիՀանրապետությունն է՝ի դեմս կառավարության (այսուհետ՝Հիմնադիր):
3. «ՀՀ Սյունիքի մարզի Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ –ը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրիԿապանի տարածքային բաժնի կողմից 12.11.2002թ.գրանցման համարը,՝27. 210. 01071, վկայականիհամարը՝ 03Ա-057496, ծածկագիր10001377):
4. Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 2007թ.:
5. Ուսումնական հաստատությունը գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ:
6. Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի 29.12–ի №1747- Ա հրամանով տրված լիցենզիաների՝ դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ

կրթական ծրագրերը.

- Տարրական ընդհանուր- 35 սահմանային տեղով
- Հիմնական ընդհանուր - 60 սահմանային տեղով
- Միջնակարգ ընդհանուր-35 սահմանային տեղով

7. Դպրոցն ունի ՀՀ զինանշանի պատկերով հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր:Կնիքը,ձևաթղթերը և անհատականայլ միջոցներ ձևավորելիս հայերենին կարող է զուգակցվել անգլերենը և ռուսերենը:

8. Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ

9. Դպրոցն ուսումնական պարապմունքներն իրականացնում է միահերթ , 5-օրյա աշխատանքային ռեժիմով:

10. Հաստատության հասցեն ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Կավարտ թաղամաս 124 Հաստատության հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն 0285 -2 -46 -37, kapan11@schools.am

11. Հաստատության ինտերնետային կայքի հասցեն kapan11.schoolsite.am

«Կապանի թիվ 11 միջնակարգդպրոց»պետականոչառևտրայինկազմակերպությունը (այսուհետ՝Դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական միջնակարգ դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է

## ՏՎՅԱԼՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՄԱՍԻՆ

Դպրոցի շենքը 3 հարկանի է, բաղկացած է մեկ մասնաշենքից:

Մակերեսը՝-1296 քառակուսի մետր

Շրջապատող տարածքը՝ 3000 քառակուսի մետր

ՈՒնի շրջորյա ջրամատակարարում, ջեռուցվում է գազով և ունի կաթսայատուն:

- Ոնի երեք առանձնասենյակ-84 մ$^2$ մակերեսով
- Դասարաններ-4հատ -84 մ$^2$ մակերեսով
- Առարկայական դասարաններ-9հատ-221 մ$^2$ մակերեսով
- Լաբորատորիա-1հատ- 19մ$^2$ մակերեսով
- Մարզադահլիճ/հարմարեցված/- 82 մ$^2$ մակերեսով
- Գրադարան-18 մ$^2$ մակերեսով
- Ճաշարան-12 մ$^2$ մակերեսով
- Հանդերձարան-2 հատ- 12 մ$^2$ մակերեսով
- Տեխնիկական նշանակության սենյակ-1հատ-34 մ$^2$ մակերեսով4
- Մրգատու այգի-1664 մ$^2$ մակերեսով
- Նիստերի դահլիճ-85 մ$^2$ մակերեսով

## Դպրոցի նյութատեխնիկական բազան

- Համակարգիչներ-11 հատ
- Տպիչ սարք-4 հատ
- Լուսացրիչ-1 հատ

## ՆԶՊ –ի կաբինետում

- Օդամղիչ հրացան-2 հատ
- Հեռուստացույց-1 հատ
- DVD-1 հատ
- Հակատանկային ականներ, ուսումնական նռնակներ և պաստառներ

## Միջոցառումների դահլիճում/հարմարեցված/

- Դաշնամուր 2հատ,նստարաններ,ամբիոն

## Մարզադահլիճում/հարմարեցված/

- Սեղանի թենիս
- Շվեդական պատ
- Նստարան

Դպրոցին անհրաժեշտ է նոր  մարզադահլիճ և արհեստանոց, / դպրոցի տարածքում կա կառույց,որը դպրոցին հատկացնելուց հետո կարելի է օգտագործել   նոր մարզադահլիճի, արհեստանոցի,ինչպես նաև գրադարանի և հաշվապահության համար/ նկ.1/:

| Հ/Հ | Դպրոցի սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը | չափանիշը |
| --- | --- | --- |
| 1 | Ուսումնական հաստատության շենքը վերանորոգված է: | այո |
| 2 | 2. Ուսումնական հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության | այո |

| | | |
|---|---|---|
| | նորմատիվներին | |
| 3 | Ուսումնական հաստատության շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր: | այո |
| 4 | Ուսումնական հաստատությունն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով | այո |
| 5 | Ուսումնական հաստատության շենքը հարմարեցված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններին (թեք հարթակներ, լայն դռներ և այլն): | ոչ |
| 6 | Ուսումնական հաստատությունն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային, անվտանգության լրակազմով, տանիքը պատված է հրակայուն նյութերով: | ոչ |
| 7 | Ուսումնական հաստատությունում ոչ կառուցվածքային վտանգներ չկան | ոչ |
| 8 | Հաստատությունը պահպանում է իր նախագծային հզորությունը: | այո |
| 9 | . Ուսումնական հաստատությունում սովորողների թիվը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվներին և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին: | այո |
| 10 | Ուսումնական հաստատության դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում են առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերին; | այո |
| 11 | Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ դպրոցի շենքին | այո |

| | | |
|---|---|---|
| 12 | Դպրոցի տարածքը մաքուր է, իսկ լաբորատորիաներում օգտագործվող և այլ վտանգավոր նյութերի թափոնները,աղբը կանոնավորապես հավաքում են հատուկ աղբարկղներում և դուրս են բերվում դպրոցի տարածքից | այո |
| 13 | Դպրոցի ամբողջ տարածքը պարբերաբար իրականացվում են ախտահանման աշխատանքներ | այո |
| 14 | Դպրոցի սովորողները ֆիզկուլտուրա առարկայի ուսումնական դասընթացները  անց են կացնում  հարմարեցված սպորտդահլիճում | այո |

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական հաստատության մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսները տնօրինվում են արդյունավետ և հաստատությունը կարողանում է ներգրավել լրացուցիչ միջոցներ.

1. սովորող-ուսուցիչ հարաբերությունը. 3,6
2. սովորող - սպասարկող-վարչական անձնակազմ հարաբերությունը. 6,9
3. դասարանների միջին խտությունը. 6,9
4. մեկ սովորողի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը. 618,9 Դրամ
5. ուսուցչների միջին աշխատավարձը. 146255 դրամ
6. վարչական աշխատողների միջին աշախատավարձը. 119000 դրամ
7. սպասարկող անձնակազմի միջին աշխատավարձը. 113453 դրամ
8. հաստատության տարեկան նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը- 0
9. ծնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը. 150000 դրամ
10. հովանավորչական և դրամաշնորհային միջոցների տարեկան չափը. 0
11. աշխատավարձերի վճարման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը. 43.835.300 դրամ
12. կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան ծախսերի չափը. 3.190.100 դրամ

13. նոր գույքի, այդ թվում՝ սարքավորումների ձեռքբերման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը:111000 դրամ

## ԿԻՑ ԱՅՈՒՍԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ԴՊՐՈՑՈՒՄ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ԵՐԵՔ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Աղյուսակ 1. Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ 3 ուստարիների համար

| Սովորողների թիվը | 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 | Փոփոխությունների դինամիկան/աճ կամ նվազում/ |
|---|---|---|---|---|---|
| 1-ին դասարան | 1 | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 2-րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 3-րդ դասարան | 0,5 | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 4-րդ դասարան | 1 | 0,5 | 1 | 1 | աճ |
| 5-րդ դասարան | 1 | 1 | 0,5 | 1 | նվազում |
| 6-րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 7-րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 8-րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 9-րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 10-րդ դասարան | 1 | 1 | 1 | 0,5 | անփոփոխ |
| 11-րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 12-րդ դասարան | 0,5 | 1 | 1 | 1 | անփոփոխ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ընդամենը | 11 | 11,5 | 11,5 | 11,5 | անփոփոխ |

Դպրոցի աշակերտների աճը կապված է մոտակա բնակավայրերից և Արցախի Հանրապետությունից դպրոց հաճախելու հանգամանքով

## Աղյուսակ 2. Աշակերտների թիվը՝ ընթացիկ և նախորդ 3 ուստարիների համար

| Սովորողների թիվը | 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | | Փոփոխությունների դինամիկան/աճ կամ նվազում/ |
|---|---|---|---|---|---|
| 1-ին դասարան | 13 | 8 | 8 | 5 | նվազում |
| 2-րդ դասարան | 4 | 16 | 8 | 8 | Աճ-անփոփոխ |
| 3-րդ դասարան | 3 | 5 | 14 | 7 | նվազում |
| 4-րդ դասարան | 5 | 4 | 5 | 15 | աճ |
| 5-րդ դասարան | 6 | 6 | 4 | 5 | աճ |
| 6-րդ դասարան | 7 | 7 | 5 | 4 | նվազում |
| 7-րդ դասարան | 6 | 8 | 5 | 5 | նվազում |
| 8-րդ դասարան | 8 | 8 | 7 | 5 | նվազում |
| 9-րդ դասարան | 8 | 8 | 7 | 6 | նվազում |
| 10-րդ դասարան | 5 | 4 | 4 | 2 | նվազում |
| 11-րդ դասարան | 6 | 5 | 4 | 4 | անփոփոխ |
| 12-րդ դասարան | 3 | 5 | 5 | 4 | նվազում |
| Ընդամենը | 74 | 84 | 76 | 70 | նվազում |

Դպրոցի աշակերտների թվի նվազումը կապված է ընտանիքների բնակավայրի փոփոխության հետ

## ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ  ԹԻՎԸ՝ ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ԵՐԵՔ  ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ



## ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻԹԻՎԸ՝ ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ԵՐԵՔ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ




## Աղյուսակ 3. ՈՒսուցիչների թիվը՝ ընթացիկ և նախորդ 3 ուստարիների համար

| Ցուցանիշը | 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 | Փոփոխությունների դինամիկան/աճ կամ նվազում/ |
|---|---|---|---|---|---|
| ՈՒսուցիչների ընդհանուր թիվը | 19 | 21 | 21 | 20 | անփոփոխ |
| Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը | 17,6 | 20 | 20 | 23 | աճ |
| | | | | | |

## Աղյուսակ 5. Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 3 ուստարիների համար

| ՈՒսուցիչների թիվը | 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | Փոփոխությունների դինամիկան/աճ կամ նվազում/ |
|---|---|---|---|---|
| ՄԻՆչև 30 տարեկան | 4 | 5 | 5 | անփոփոխ |
| 31-ից 40 տարեկան | 6 | 6 | 6 | անփոփոխ |
| 41-ից 50 տարեկան | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 51-ից 55 տարեկան | 3 | 4 | 4 | անփոփոխ |
| 56 տարեկան և ավելի | 5 | 5 | 5 | անփոփոխ |

Ուսուցիչների տարիքային կազմի փոփոխության պատճառը տարիքային բնականոն աճն է

## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԻՎԸ՝ ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ԵՐԵՔ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ




## ՈւՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ



## Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 3 ուստարիների համար




| N | Հաստիքի անվանումը | Միավորը |
|---|---|---|
| 1 | Տնօրեն | **1** |
| 2 | Տեղակալ ուս. աշխատանքի գծով | **0,5** |
| 3 | Մասն.կրթ.աջակ.գծով տնօրենի տեղակալ | - |
| 4 | Տեղակալ տնտ.աշխ.գծով | - |
| 5 | Տնտեսվար | **0,5** |
| 6 | Հաշվապահ | **0,5** |
| 7 | Քարտուղար(գործավար) | - |
| 8 | Քաղպաշտպանության կազմակերպիչ | **0,5** |
| 9 | Շենքերի,կառուցվածքների և սարքավորումների սպասարկման ու ընթացիկ նորոգման բանվոր | |
| 10 | Հավաքարար | **2** |

| | | |
|---|---|---|
| 12 | Վառարան վառող (գազայրման օպերատոր) | **2** |
| 13 | Պահակ | **3** |
| 14 | Բակապահ (դռնապան) | |
| 15 | Համակարգչային օպերատոր | **1** |
| **Ընդամենը՝ ոչ մանկավարժական** | | 11 |
| 1 | Զինղեկ | **1** |
| 2 | Դաստ.աշխատանքների կազմակերպիչ | **0,5** |
| 3 | Հատուկ մանկավարժ | **0,5** |
| 4 | Ուսուցչի օգնական | **1** |
| 5 | Գրադարանավար | **0,5** |
| 6 | Լաբորանտ | **0,5** |
| **Ընդամենը՝ մանկավարժական** | | 4 |
| **Խոհարար** | | 0,5 |

Դպրոցում աշխատում է 20ուսուցիչ, որից բարձրագույն մասնագիտական կրթությամբ՝ 17, միջնակարգ մասնագիտական՝ 3:

Դպրոցի աշակերտների թիվը 70, որից գնահատված 2 սովորող:

Կառավարման խորհուրդը կազմված է 9 անդամից: 2022 թվականին դպրոցի կառավարման խորհրդի անդամների համար իրականացվել են վերապատրաստումներ: Դպրոցի կառավարման խորհրդի նիստերում քննարկվել և հաստատվել են տարեկան և եռամսակային ֆինանսական հաշվետվությունները, ներքին գնահատումը, ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվությունը, ուսումնական տարվա տարիֆիկացիան և հաստիքացուցակը:Կառավարման խորհրդի աշխատանքների գործունեությունը բաց և թափանցիկ է:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Կառավարման խորհուրդը կազմված է 9 անդամից:

Մանկավարժական խորհուրդը՝ 13 անդամից:

Ծնողական խորհուրդը՝12 անդամից:

Աշակերտական խորհուրդը՝17-անդամից:
Խորհրդակցական մարմիններն ունեն կանոնադրություն, աշխատանքային պլաններ, գործում են

օրենքով նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում:

Դպրոցը գործում է մեկ հերթով և հինգօրյա աշխատանքային ռեժիմով, միահերթ, ունիհաստատվածհամադպրոցականտարեկանուսումնադաստիարակչականաշխատանքայի ն պլան, որի հիման վրա դպրոցի մյուս օղակները պլանավորել են իրենց աշխատանքները: Ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվությունները ըստ կիսամյակների քննարկվել է կառավարման և խորհրդակցական մարմիններում:

Այսօր գիտելիքը ամենուր է: Կան գիտելիք ստանալու բազմաթիվ աղբյուրներ և հնարավորություններ: Հետևաբար, դպրոցը գիտելիք փոխանցելու աղբյուրներից ընդամենը մեկն է: Եվ որպեսզի աշակերտները ցանկանան դպրոցից գիտելիք ստանալ, ուսուցիչը պետք է լինի հետաքրքիր մարդ, ունենա սովորեցնելու, սովորելու,լ սելու և հասկանալու հմտություններ: Մերօրյա դպրոցի հենասյուները պետք է լինեն արհեստավարժ ուսուցիչները: Ուսուցիչը շատ կարևոր դեր ունի ուսուցման գործում,սակայն գործընթացի կենտրոնումպետք է լինի սովորողը: Ուսուցիչը պետք է կարողանա դասարանում ստեղծել հրապուրիչ ուսումնական միջավայր, որտեղ յուրաքանչյուր սովորող ազատ և անկաշկանդ կդրսևորի իր առավելագույն ներուժը՝անկախ իր հնարավորություններից:

Կարևոր է նշել նաև, որ դպրոցի տնօրենի աշխատանքում կան որոշակի մարտահրավերներ: Այսօր թե՛տնօրենը, թե՛փոխտնօրենները և թե՛ուսուցիչները պետք է կերտեն ուսումնառության նոր ուղիներ առաջնորդելով ուսումնական գործընթացը:

## 2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

«Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար, ուսումնասիրելով դպրոցի ողջ մասին տեղեկատվությունը,վերենհանվել դպրոցի ուժեղ ու թույլ կողմերը, հնարավորություններն՝ այն ռիսկերը, որոնք կարող են խոչընդոտել խնդիրների լուծման ընթացքում: «Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028թթ. Զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել նաև դպրոցի տնօրենի, տնօրենի տեղակալներին մանկավարժների նախորդուսումնական տարիների հաշվետվությունները, հաստատության ձեռքբերումները և դպրոցում առկա հիմնախնդիրները: Հաշվի են առնվել նաև հաստատության մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների առաջարկությունները՝ համաձայն ՀՀ կառավարության 2023թ․ փետրվարի 9-ի N181-Ն որոշման 16 –րդ կետի։

Ըստ այդմ կատարել եմ իրավիճակի ՈՒԹՀԽ (SWOT) վերլուծություն

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| 2.1.Դպրոցի շենքային պայմանները | |
| • Հաստատության տարածքը ցանկապատված և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար<br>● Ուսումնական հաստատությունն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից<br>• Կրթական գործունեություն իրականացնելու համար ունի լուսավոր և վերանորոգված դասասենյակներ<br>●ՈՒսուցումը դպրոցում կազմակերպվում է կաբինետային համակարգով<br>• Վերանորոգված գրադարան և ընթերցասրահ<br>• Հաստատությունն ունի քիմիայի, ֆիզիկային կենսաբանության լաբորատորիա/վերանորոգված/<br>• Հաստատությունըունիվերանորոգվածնկախ ավորված/հարմարեցված/հանդիսություններ իդահլիճ<br>• Առկա է շուրջօրյա հոսող խմելու ջուր:<br>• Հաստատությունը ապահովված էլեկալջեռուցման համակարգով, դասասենյակներում, միջանցքներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ՝սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան ջերմաստիճանով:<br>• Ուսումնական հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմատիվներին<br>• Ուսումնական հաստատության շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր | • Շենքը կարիք ունի մասնակի վերանորոգման<br>• Հարմարեցված մարզադահլիճ,որը ձմեռվա սեզոնին դժվարացնում է դասապրոցեսի անցկացմանը /մակերեսի փոքրության պատճառով/<br>• Տարրական դասարանների դասասենյակների մակերեսը փոքր են:<br>• ԲՏՃՄ լաբորատորիաները հագեցված չեն նորանոր սարքավորումներով<br>• Գրադարանը չունի համակարգիչ<br>• Հրաձգարանի և թաքստոցի բացակայություն<br>•Մարզահրապարակի բարեկարգում<br>•. Ուսումնական հաստատության շենքը հարմարեցված չէ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններին (թեք հարթակներ, լայն դռներ և այլն<br>•Դպրոցը չունի արհեստանոց/ տարածքում կա |

<table>
<tr><td>• Դպրոցը ունի արևային կայան<br>• Ուսումնական հաստատությունն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով<br>• ուսումնական հաստատության նախասրահում, բոլոր հարկերում, դասասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով</td><td>համապատասխան կառույց, բայց այդ կառույցը դպրոցի կադաստրային արժեքի մեջ չի մտնում/,</td></tr>
<tr><td colspan="2">2.2 ԴՊՐՈՑԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ</td></tr>
<tr><td>●Դպրոցում գործում է 1 լաբորատորիա՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանության, վերանորոգված է,ունի համակարգիչ/16մ$^{2}$/: ՈՒնի ռազմագիտության կաբինետ/օդամղիչ հրացան,հեռուստացույց, DVD,ականեր,ուսումնական նռնակներ,պաստառներ, քարտեզներ/<br>●Դպրոցում առկա է համակարգչային կաբինետ, որտեղ կան 5 համակարգիչ, ՈՒսուցչանոցում, կաբինետներում ևս կա 6 համակարգիչ, տպիչ սարք-4հատ,տեսացրիչ Այս ամենը հնարավորություն է տալիս ինֆորմատիկայի և մյուս դասաժամերըլիարժեք պարապելու<br>●Գրադարանը վերանորոգված է/ Ապահովված է դպրոցը դասագրքերով և ուսումնական գրականությամբ<br>• Դպրոցը ունի արևային կայան<br>• ՈՒնի խոհանոց և ճաշարան , բոլոր անհրաժեշտ պարագաներով<br>• Հանդիսությունների դահլիճում առկա է դաշնամուր/օգտագործվում է միջոցառումներին,ինչպես նաև երաժշտության դասին /</td><td>• Լաբորատոր սարքավորումները և նյութերը քիչ են և հին,անհրաժեշտ է համալրել նոր նյութերով և սարքավորումներով,ուսումնական գործընթացը արդյունավետ օգտագործելու համար<br>• Համալրել նոր ինտերնետ կապով,հասանելի լինի բոլոր ուսումնական կաբինետների համար<br>• Դպրոցը չունի արհեստանոց/տեխնոլոգիայի ժամերը պարապում են միայն տեսականորեն/<br>• Անհրաժեշտ է հրաձգարան<br>• ինտերակտիվ գրատախտակ<br>• անհրաժեշտ է պրոյեկտոր/լուսացրիչ/<br>• Մարզադահլիճը և</td></tr>
</table>

| | |
|---|---|
| • Ապահովված է դպրոցը դասագրքերով և ուսումնական գրականությամբ | միջոցառումների դահլիճը հարմարեցված են: Ֆիզկուլտուրայի ժամերին, հատկապես ձմռանամիսներին ունենում են որոշակի դժվարություններ: Անհրաժեշտ է նոր սպորտդահլիճի, գույքի և մարզասարքերի համալրում<br>• Գրադարանը չունի համակարգիչ և չի օգտվում գրադարանավարության հատուկ համակարգչային ծրագրից<br>• Չունի տրանսպորտային միջոց |
| 2.3ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ | |
| •Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը/կազմված 9 անդամից/<br>•Խորհուրդը ըստ ժամանակացույցի հրավիրել է նիստեր,լսել օրակարգի հարցերը,ընդունել որոշումներ՝ ըստ իրավունքի հավանություն է տվել կամ հաստատել այս կամ այլ հարցեր<br>•Խորհրդի կողմից հավանության արժանացած զարգացման ծրագիրը ըստ կարգի քննարկվել է խորհրդի նիստում, վեր հանվել կատարված և չկատարված կետերը,պարզաբանել չկատարման | • կառավարման խորհրդի գործունեությունը պասիվ է<br>• Կառավարման խորհրդի որոշ անդամներ չեն պատկերացնում իրենց իրավունքներն ու պարտականությունները և շատ դեպքում չգիտեն ինչի համար են ընտրված |

| | |
|---|---|
| պատճառները և տրվել որոշումներ դրանք իրականացնելու համար<br>•Խորհրդի հավանությանն է ներկայացվել հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակը ,յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագիծը, բյուջեի և ծախսերի կատարման մասին տարեկան հաշվետվությունը<br>•Հաստատել է դպրոցի ներքին կարգապահական կանոնները<br>•Մասնակցել է դպրոցի ներքին գնահատման գործընթացին<br>•Խորհուրդը հաստատել է նախարարության կողմից հաստատված ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակված հանրակրթական դպրոցի ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգը ,ԿԱՊԿՈՒ սովորողների կազմը<br>•ՈՒնի արձանագրությունների մատյան, որտեղ ըստ ժամանակացույցի լրացված է քննարկված հարցերը դպրոցի գործունեության վերաբերյալ ընդունած որոշումները և կատարվելիք խնդիրները։ | |
| 2.4 ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ | |
| •Դպրոցը պատշաճ կարգով համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների | •Չունի հոգաբարձուների խորհուրդ |

| | |
|---|---|
| հետ՝ ապահովելով մասնակցությունը վերջինիս կողմից իրականացվող կրթական ,մշակութային և սպորտային միջոցառումներին:<br>•Դպրոցը ծնողներին ներգրավում է կրթության գործընթացի կազմակերպմանը(պարբերական դասալսումներին՝ըստ անհրաժեշտության), արտադասարանական միջոցառումներին, առաջարկում որոշ միջոցառումներին հավասար լուծմանը, տաք սննդի կազմակերպմանը, դպրոցի շրջակայքի կատարման աշխատանքներին:<br>•Իրականացվում է դպրոց-ծնող փոխհամագործակցությունն ամրապնդող միջոցառումներ<br>•Դպրոցի անձնակազմին ,սովորողներին, ծնողներին ապահովում է մասնակցությունը մարզային և համայնքային միջոցառումներին:<br>•Համագործակցում է մի շարք կազմակերպությունների և կառույցների հետ՝ սովորողի քաղաքացիական գիտակցություն ձևավորելու նպատակով:<br>• Դպրոցը համագործակցում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի /ԿԳՄՍ/ նախարարության, ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի հետ՝ ըստ պատշաճի իրականացրել սույն մարմինների կողմից իջեցված հրամանները, կարգադրությունները, մասնակցել իրականացվող միջոցառումներին (կրթական ,մշակութային և սպորտային) | • Չունի շրջանավարտների խորհուրդ<br>• Ծնողների որոշակի մասի պասիվ մասնակցությունը դպրոցական կյանքին |

| | |
|---|---|
| •Դպրոցը համագործակցում Սյունիքի մարզի հանրակրթական դպրոցների, Կապանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, քոլեջների, Սյունիքի տարածքային մանկավարժա հոգեբանական աջակցության կենտրոնի, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժնի, ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային բաժնի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության Կապանի մասնաճյուղի, գնահատման և թեստավորման կենտրոնի, կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի,««Վորլդ Վիժն Հայաստան»» բարեգործական միջազգային կազմակերպության Կապանի մասնաճյուղի,««Զաարատ Կապան»» բաժնետիրական ընկերության /ՓԲԸ/, ՋՊՄԿ/ՓԲԸ/<br>• Համագործակցում է ԿԶՆԱԿ-ի, գնահատման և թեստավորման կենտրոնի, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի հետ: | |
| **2.5 ԴՊՐՈՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ** | |
| • Դպրոցը ուսումնադաստիարակչական հարցերում փորձում է ապահովել աշակերտակենտրոն մոտեցում:<br>•Մանկավարժական և ուսուցչական Անձնակազմերը ունեն համապատասխան | • Ուսուցիչները չունեն տարրակարգ,<br>• ուսուցիչների 10%-ն է հայտ ներկայացրել |

| | |
|---|---|
| բարձրագույն մանկավարժական որակավորում/ քսան ուսուցիչներից՝ 17-ը ունի բարձրագույն մանկավարժական կրթություն,երեքը՝ միջնակարգ մասնագիտական՝որից երկուսը դիմել են կամավոր ատեստավորման/<br>•Քսան ուսուցիչներից 15-ը ունեն 5 և ավելի տարվա մանկավարժական ստաժ<br>. Պահպանում են մանկավարժական էթիկայի կանոնները և երեխաների իրավունքները<br>• Ուսուցիչներն ունեն անհրաժեշտ պատրաստվածություն, մասնակցում են մասնագիտական վերապատրաստումների,սեմինարների<br>• Ուսուցիչների մեծ մասը դասապրոցեսին կիրառում է նոր տեխնոլոգիաներ՝ ՏՀՏ, ունեն բաց դասեր ,սալիկահանդեսներ:<br>• Ուսուցիչները համագործակցում են միմյանց հետ<br>• Ուսուցիչներն ակտիվ մասնակցում են ԿԶՆԱԿ հիմնադրամիկողմից կազմակերպվող և անցկացվող բոլոր սեմինարներին և վերապատրաստումներին<br><br>• Կազմակերպում են մասնագիտական և մանկավարժական-մեթոդական ընթերցումներ<br>• ՈՒնեն փոխադարձ դասալսումներ և քննարկումներ<br>• Անցկացված բաց դասերը և դպրոցական միջոցառումները տեղադրված են դպրոցական կայքէջում<br>●Պահպանում են առողջ մթնոլորտ,արժեքային միջավայր, պահպանում են դպրոցի ներքին կարգապահական կոնոնները,մասնակցում են դպրոցի ներքին գնահատմանը:<br>• Մասնակցում են համայնքային միջոցառումներին:<br>• | մասնակցելու կամավոր ատեստավորման /միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողները/<br>• Անընդհատ տեղի է ունենում ուսուցիչների ներհոսք և արտահոսք:<br>• Դպրոցը չունի մասնակից ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կազմակերպվող«Տարվա լավագույն ուսուցիչ»մրցույթին<br>• Գնահատման մեթոդաբանության մեջ ունեն իրենց սուբյեկտիվ կարծիքները<br><br>• Ինֆորմատիկա, ֆիզկուլտուրա և հասարակագիտություն առարկաների ուսուցչի թափուր տեղ/ կարգի համաձայն տրված է հայտարարությունը/ |
| **2.6.ԴՊՐՈՑՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ** | |

| ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ,ԿԻՐԱՌՎՈՂ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | |
|---|---|
| ●Դպրոցն ունի համակարգչային սենյակ 5 համակարգչով, առարկայական կաբինետներ-6 համակարգչով, 4 տպիչ,լուսացրիչ,պլանշետներ,որը նպաստում է ՏՀՏ-ի կիրառումը դասապրոցեսներին<br>• ՏՀՏ-ի կիրառմամբ թեմատիկ պլանների ներբեռնում, էլեկտրոնային մատյանների լրացում, կրթական փոփոխությունների հետ ծանոթացում<br>• ՏՀՏ-ի կիրառմամբ ծանոթացում այլ կրթական փաստաթղթերի հետ<br>• Բաց դասերի անցկացում լուսացրիչի միջոցով<br>• Սալիկահանդեսների պատրաստում<br>• Թեմատիկ գրավոր աշխատանքների կատարում/ինֆորմատիկայի ժամերին/<br>• Ըստ ուսումնական պլանի ԲՏՃՄ առարկաներից, Հայ գրականություն և Պատմություն առարկաներից առնվազն ամիսը մեկ անգամ ՏՀՏ-ով դաս /ԿՏԱԿ/<br>• Մաթեմատիկա և ԲՏՃՄ առարկաներից վիրտուալ լաբորատոր աշխատանքների կատարում<br>• ՏՀՏ-ի միջոցով առցանց վերապատրաստումների անցկացում<br>• ՏՀՏ-ի և այլ կրթական հարթակների օգնությամբ հեռավար դասերի | • Թույլ ինտերնետ կապ/ԿՏԱԿ/<br>●Չկա էլեկտրոնային գրատախտակ<br>●Գրադարանում և հանդիսությունների դահլիճում չկա համակարգիչ<br>●Ֆինանսական դժվարություններ են առաջանում համակարգիչների ծրագրային խնդիրների լուծման համար |

| | |
|---|---|
| անցկացում/անհրաժեշտության դեպքում/<br><br>• ՏՀՏ,-ի և լուսացրիցի օգտագործում միջոցառումներին<br>● Այլ կրթական հարթակներ | |

| | |
|---|---|
| **2.7 ԴՊՐՈՑԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ՝ ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ** | |
| • Դպրոցը ուսումնական գործունեությունը իրականացնում է առարկայական չափորոշիչների և ծրագրերի պահանջներին համապատասխան<br>• Դպրոցը հետևողականություն է ցուցաբերում Տարրական, հիմնական և միջնակարգ կրթությանը, շրջանավարտների ուսումնառությանն ակնկալվող վերջնաարդյունքներին՝ իրականացնելով ներդպրոցական վերահսկողությանն ներկայացվող բոլոր կետերով/ դասալսումներ, թեմատիկ պլանների ստուգում, թեմատիկ գրավոր աշխատանքների ստուգում ,մատենավարություն և այլ/:<br>• Սովորողների կարողունակությունները, գիտելիքները, հմտությունները զարգացնելու նպատակով իրականացվում են բազմաբնույթ միջոցառումներ ՝ մրցույթներ, առարկայական օլիմպիադաներ, էքսկուրսիաներ, ԱՅԲ-ի կողմից իրականացվող միջոցառումներին<br>• Դպրոցը ուսումնական գործունեությունը իրականացնում է ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանով սահմանված նպատակներով ու խնդիրներով, ժամանակին կազմվել է առարկայական թեմատիկ պլանները ըստ ուսումնական պլանի և ներբեռնվել ԿՏԱԿ-ում<br>• Դպրոցի առաջադիմությունը կազմում է 50%-ից բարձր<br>• Գերազանցիկների թիվը կազմում է սովորողների թվի 21%-ը:<br>• Բուհ ընդունվելու բարձր ցուցանիշ | ●Առարկայական օլիմպիադաներին մասնակիցների ցածր ցուցանիշ<br>● Միջոցառումներին սովորողների մասնակցության որոշ մասը պասիվ է<br>●Ռիսման նկատմամբ սովորողների որոշ մասը պասիվ է |

| 2.8. ԴՊՐՈՑԻ ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ,ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ | |
|---|---|
| ●Դպրոցում տիրում է հանդուրժողականության, առողջ, սոցիալ-հոգեբանական մթնոլորտ,ինչը հիմք է հանդիսանում սովորողների, ուսուցիչների , ծնողների բազմակարծրությանը<br>●Դպրոցում հաղթահարված են ներառականությունը խաթարող սոցիալական խոչընդոտները/ վերաբերմունք, կարծրատիպ/<br>●Դպրոցում գործող խմբակները և խմբային աշխատանքները սովորողներին մոտ առաջ է բերում հարգանք իրար նկատմամբ, ստեղծում բարոյահոգեբանական մթնոլորտ<br>●Դպրոցում յուրաքանչյուր սովորող ազատ ինքնահաստատվում է<br>● Յուրաքանչյուր աշխատող ազատ է իր աշխատանքային գործունեության մեջ,անկաշկանդ , ունի ազատ արտահայտվելու իրավունք և սա բերում է կրթության իրականացման ժողովրդավարության բարձր մակարդակի մասին<br>• ՌԻսուցչի օգնականը և մանկավարժահոգեբանական կենտրոնը համատեղ աշխատանքներ են կատարում ԿԱՊԿՈՒ սովորողներին ուշադրության կենտրոնում պահելու, լինեն շրջապատված մյուս սովորողներով/ գնահատված են երկու սովորող/<br>●Ձևավորվում է արժեքային համակարգը այցեր կատարելով թանգարաններ, արվեստագետի արվեստանոց : | ●Ներառական կրթություն իրականացնելու՝ԿԱՊԿ-ի ոչ բավարար պայմաններ<br>●Մասնագետների բացակայություն/հոգեբան, սոցմանկավարժ<br>●Ներառական կրթության միջավայրի ձևավորում |

| 2.9 ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ , ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | |
|---|---|
| ● Դպրոցում գործում է որոշումների կատարման համաչափ համակարգ, ըստ որի հաշվի է առնվում յուրաքանչյուր ուսուցչի կամ աշխատակցի կարծիքը առաջարկությունը<br>●Դպրոցում իրականացվում է փորձի փոխանակում, ներդպրոցական ակտիվ պայմաններ, որոնք և առաջ են բերում ուսուցիչների ինքնազարգացմանը , ինքնուրույնությանը ինքնահաստատմանը | • Ուսուցիչների մոտ նախաձեռնություն չկա Տարակարգ ստանալու, կամավորպատեստավորման մասնակցելու |

| | |
|---|---|
| ●Դպրոցում առկա է համապատասխան համակարգիչներ,որոնք բավարար են որպեսզի ուսուցիչները դասերից հետո աշխատեն էլեկտրոնային մատյաններում և զբաղվեն ինքնակրթությամբ<br>●Դպրոցը խրախուսում է իր աշխատանքում պատասխանատու և պարտաճանաչ աշխատակցին/շնորհակալագիր, պատվոգիր/<br>●Դրամական պարգևադրում են ստացել ֆինանսական տարվա վերջում ՀՀ Սյունիքի մարզպետի որոշմամբ և կառավարման խորհրդի հավանությամբ բոլոր աշխատողները/վերջին երկու տարվա ընթացքում 50-100%-ով/ : | |
| **2.10 ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐ** | |
| ●Ուսումնական հաստատության մարդկային ,ֆինանսական և նյութական ռեսուրսները տնօրինվում են արդյունավետ և հաստատությունը կարողանում է ներգրավել լրացուցիչ միջոցներ<br>● Աշակերտ թիվով ֆինանսավորումը բավարարում է կազմակերպել դպրոցի ֆինանսական գործունեությունը<br>●Պետական բյուջեից ստացված ֆինանսավորումը ժամանակին ուղղվում է աշխատավարձի, եկամտահարկի,կոմունալ վճարների մուծմանը<br>●Պետական բյուջեից ստացված ֆինանսավորումից փոխանցումներ են կատարվել դպրոցի և վերապատրաստող կազմակերպությունների միջև կնքված պայմանագրի հիման վրա/ ըստ հերթական ատեստավորման `ուսուցիչների 20%-ի հաշվով/<br>●Ուսուցիչ- սովորող հարաբերությունը`3,5 է<br>●Անձնակազմ-սովորող հարաբերությունը`7 է | ●Դպրոցի ֆինանսական գումարը չի բավարարում լաբորատոր սարքեր և սպորտային գույք ձեռք բերելու համար<br>● Համակարգիչների ծրագրային խնդիրների լուծման համար |

## 3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

